# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում հեռաուսուցման գծով նախատեսվող դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ-խորհրդատուի մրցույթ

«29» դեկտեմբերի 2017թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

*Շիրակի պետական համալսարանը հայտարարում է հեռաուսուցման գծով նախատեսվող դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:*

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,

- ✓ իրականացնել ուսումնական նյութերի մշակման աշխատանքներ բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ ուսումնասիրել հեռաուսուցման դասընթացի տեղական և միջազգային գործնական, լաբորատոր նյութեր,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ 60 շահառուների կարիքների և հնարավորությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ հեռաուսուցման դասընթացի ուսումնական նյութերի և դրանց մատուցման մեթոդների վերաբերյալ շահառուների շրջանում մշտադիտարկում իրականացնելիս,
- ✓ մշակել հեռաուսուցման դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության նախնական տարբերակը,
- ✓ վերանայել և բարելավել ուսումնական նյութերի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակությունը՝ նկատի առնելով շահառուների շրջանում դասընթացի որակի ապահովման մասնագետի մշտադիտարկման արդյունքները և քննարկելով ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ:

**Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.**

| № | Անվանումը | Պահանջը | Միավորը |
|---|---|---|---|
| 1. | **Որակավորում** | ✓ առնվազն մագիստրոս և/կամ դիպլոմավոր-ված մասնագետ համապատասխան ոլորտում: | **20** |
| 2. | **Ընդհանուր աշխատանքային փորձ** | ✓ դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/,<br>✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ: | **40** |
| 3. | **Հատուկ** | ✓ էլեկտրոնային ուսուցման մասնագիտական | **40** |

| | | | |
|---|---|---|---|
| | **աշխատանքային փորձ** | դասընթաց(ներ)ի բովանդակության մշակման փորձ,<br>✓ գործնական և լաբորատոր պարապմունք-ների գիտելիքների ստուգման գործիքակազմի մշակման ու կիրառման փորձ,<br>✓ ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է: | |
| | **Ընդամենը՝** | | **100** |

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 2,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), shirakhovhannisyan@mail.ru, հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի հունվարի 19-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

**Դիմում**

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում _____
_____
_____

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ /_____/

(ստորագրություն)

«____» _____ 2018 թ.